ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 21 » նոյեմբեր 2024թ. No 6702 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման գնահատման N EL/01/3102-24 առ 18.11.2024թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ընդունել 4 դեղի հետգրանցումային փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաղրյանին՝

1) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, լիազոր մարմնի հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

4. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի վերաձևակերպված հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի նոյեմբերի «21 » - ի N 6702- Ա հրամանի

Գրանցման հավաստագրի վերաձևակերպում պահանջող հետգրանցումային փոփոխությունների ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն առ 28.02.2019 որոշման

| ՀՀ | Փոփոխության տեսակ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | IA, IB և II | Կարդիտոն | լեոկարնիտին | լուծույթ ներքին ընդունման | 100մգ/մլ; (10) ապակե սրվակ 10մլ | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ռուստավելի Հայվեյ 52, Թբիլիսի- երկրորդային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Անֆարմ Հելլաս Ս.Ա., Աթենք Լամիա Ազգային Մայրուղու 61-րդ կմ, Սխիմատարի Վիոտիաս, 32009, Հունաստան- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող | Վրաստան | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ռուստավելի Հայվեյ 52, Թբիլիսի | Վրաստան | Դ | 19234/2/1 15.11.2024 |
| 2 | IA | Լազոլվան օշարակ 15մգ/5մլ | ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ) | օշարակ | 15մգ/5մլ; 100մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ | Օպելլա Հելթքեր Իտալիա Ս.Ռ.Լ., Վիալե Եուրոպա, 11, 21040 Օրիջիո (ՎԱ) | Իտալիա | Ա.Նաթերման և Սի ԳմբՀ, Բրունինգշտրասե 50, 65929 Ֆրանկֆուրտ ամ Մայն | Գերմանիա | ԱԴ | 20899/1/1 15.11.2024 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | IA և IB | Ինզավիրին | պենտանդիոաթթու (պենտանդիոաթթվի իմիդազոլիլ էթանամիդ) | օշարակ | 30մգ/5մլ; պլաստիկե 22իկ 50մլ և չափիչ ներարկիչ, պլաստիկե 22իկ 90մլ և չափիչ ներարկիչ | Վալենտա Ֆարմ ԲԸ, 141108, Մոսկվայի շրջան, Շելկովո, Ֆաբրիչնայա փ., 2-երկրորդային փաթեթավորող, որակի (ֆիզիկոքիմիական) և բաց թողնման հսկող, ԷյԲիՍի Ֆարմասյուտիչի Ս.պ.Ա, Վիա Կանտոնե Մորետի, 29, 10015, Իվրեա, Իտալիա- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, Փորձարարական լաբորատորիա Ցենտեմո ՍՊԸ, 141108, Մոսկվայի շրջան, Շելկովո, Ֆաբրիչնայա փ., 1, մասնաշենք 1, գրասենյակ 315, Ռուսաստան- որակի հսկող (մանրէաբանական) | Ռուսաստան | Վալենտա Ֆարմ ԲԸ, 141108, Մոսկվայի շրջան, Շելկովո, Ֆաբրիչնայա փ., 2 | Ռուսաստան | ԱԴ | 20758/3/2 15.11.2024 |
| 4 | IA և IB | Գրամիդին նեո | գրամիցիդին Ս (գրամիցիդին Ս դիհիդրոքլորիդ), ցետիլպիրիդինիումի քլորիդ (ցետիլպիրիդինիում քլորիդի մոնոհիդրատ) | դեղահատեր բերանի խոռոչում ներծծվող | 3մգ+1մգ; (18/2x9/) բլիստերում | Վալենտա Ֆարմ ԲԸ, 141108, Մոսկվայի շրջան, Շելկովո, Ֆաբրիչնայա փ., 2 | Ռուսաստան | Վալենտա Ֆարմ ԲԸ, 141108, Մոսկվայի շրջան, Շելկովո, Ֆաբրիչնայա փ., 2 | Ռուսաստան | ԱԴ | 20067/3/1 15.11.2024 |